

# ՍԱՂՄՈՍ 49

## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Հարստությանը վստահելու հիմարությունը	Հիմարի վստահությունը	Կյանքի և հարստության վաղանցիկության շուրջ խորհրդածում	Հարստությանը ապավինելու հիմարությունը	Հարստության ունայնությունը
<u>MT ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, Կորիսի որդիների Սաղմոսը				
49:1-4	49:1-4	49:1-4	49:1-4	49:1-2 49:3-4
49:5-9	49:5-9	49:5-9	49:5-9	49:5-6 49:7-8 49:9
49:10-12	49:10-12	49:10-12	49:10-12	49:10 49:11 49:12-13
49:13-15	49:13-15	49:13-15	49:13-15	49:14ա-գ 49:14դ-15
49:16-20	49:16-20	49:16-20	49:16-18 49:19-20	49:16-17 49:18-19 49:20

### ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

## ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Սաղմոս 49 իմաստության սաղմոս է (տես՝ Սաղմոս 37): Այն ուղղված է ուխտի ժողովրդին՝ համայնքին, ոչ թե ՅԱՀՎԵԻՆ: Շատ ընդհանրություններ ունի Առակաց գրքի հետ, քան կարծես թե Սաղմոսաց գրքի մնացած մասերի հետ: Նկատե՛ք այն գուգահեռականությունը և տերմինաբանությունը, որն առկա է Սաղմոս 49:3-4,10-12,13-ում:

Բ. Թեմայի նյութը նման է Սաղմոս 37 և 73-ին, որը հիմնականում նկարագրվում է որպես «երկու ճանապարհ», ճանապարհ, որը տանում է կյանքի և ճանապարհ, որը տանում է մահվան (տես՝ Սաղմոս 1 և 2 Օրինաց 30:1,15,19): Այս երկու ճանապարհները հիմնականում երևում են Սաղմոս 49:3-ում, իսկ 5-ը ի համեմատություն Սաղմ. 49:6-ի:

Գ. Թեման մարդկային, երկրավոր հարստությանը վստահելու հիմարությունն է: Սա ինչ-որ տեղ զարմանալի է, քանի որ հարստությունը և հաջողությունը դիտարկվում էին որպես ՅԱՀՎԵԻ օրինության նշան՝ ուխտի հնազանդության համար (տես՝ Ղևտացիների 26, 2 Օրինաց 27-30):

## ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

### NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍ. ՍԱՂՄՈՍ 49:1-4

<sup>1</sup>Լսե՛ք, ո՛վ բոլոր ժողովուրդներ, ականջ դրեք,  
 Աշխարհի բոլոր բնակիչներ,  
<sup>2</sup>Հասարակ մարդիկ ու մեծամեծներ,  
 Հարուստներ ու աղքատներ միատեղ:  
<sup>3</sup>Բերանս իմաստություն է խոսելու,  
 Իսկ սրտիս մտորումը՝ իմացողություն:  
<sup>4</sup>Իմ ականջը թեթելու եմ առակի կողմը,  
 Մույթ խոսքերս տավղով եմ մեկնելու:

**49:1** Սաղմոս 49:1 ունի երկու համագոր ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ («լսե՛ք», [Qal, ՀՐԱՄԱՅԱԿԱՆ] և «ականջ դրե՛ք» [Hiphil ՀՐԱՄԱՅԱԿԱՆ]): Նշանակալի է, որ այս Սաղմոսի հեղինակը տեսնում էր, որ այն ունի տիեզերական նշանակություն՝ Խոստացյալ Երկրի սահմաններից շատ ավելի հեռուները նայող (տես՝ Սաղմ. 45:16, 46:10, 47:1-2,7-9, 48:2,10, 49:1, 50:1,4,12, այսինքն՝ «բոլոր ժողովուրդները», «աշխարհի բոլոր բնակիչները», տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ): Պետք է հիշել, որ Իմաստասիրական Գրականությունը (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ) եղել է ՀՄԱ-ում քաջ հայտնի և տարածում գտած գրական ժանր:

«Աշխարհ» բառը (BDB 317) հազվադեպ է և կարող է նշանակել՝

1. կյանք – Հոբ 11:17, Սաղմ. 39:5, 89:47
2. աշխարհ – Հոբ 11:17, Սաղմ. 39:5, 89:47
3. աշխարհ – Սաղմոս 17:14

Հիշեք, որ նշանակությունը որոշվում է համատեքստերի միջոցով, ոչ թե բառարանների, բառապաշարների:

**49:2 «հասարակ մարդիկ ու մեծամեծները»** Սա շատ տարածված փոխաբերություն է երբայերենում, որը գործածվում էր արտահայտելու երկու ծայրահեղություններ, և դրանով իր մեջ ներառելու ամեն բան (նկատեք «հարուստ և աղքատ» գուգահեռը): Այս արտահայտությունն ինքնին շատ անսովոր է, քանի որ այն բառացիորեն «մարդկանց որդիները» և «մարդկանց որդիները» տեսքն ունի, սակայն հնարավոր է բառախաղ է «մարդկանց» երկու տարբեր բառերի միջև: Առաջինը *adam* – *ադամ* բառն է (BDB 9), որը սովորաբար նշանակում է «մարդկություն»: Երկրորդը *ish* (BDB 35) բառն է, տղամարդու համար գործածվող ընդհանուր բառը: Նաև հնարավոր է, որ այս երկու արտահայտությունները հոմանիշներ են (NEB, տես՝ Մաղմ.62:9, Եսայի 2:9, և NET Աստվածաշունչը):

**49:3 «խմաստություն . . . իմացողություն»** Այս երկու տերմիններն էլ ՀՈԳՆԱԿԻ են (ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՀՈԳՆԱԿԻ), որը գերադրական գաղափարի արտահայտման կերպ է: Սա բարձրագույն իմաստությունն է և ամենախորունկ իմացողությունը: Սա էր ներշնչում իմաստության ուսուցիչներին, որ խոսեն Աստծո ճշմարտությունը:

❖	
<b>NASB, NKJV, NRSV</b>	<b>«խորհրդածություններ»</b>
<b>TEV, REB</b>	<b>«մտորումներ»</b>
<b>NJB</b>	<b>«շշունջ»</b>
<b>JPSOA</b>	<b>«խոսք»</b>
<b>NAB</b>	<b>«արտասանություն»</b>

Սա այս արմատի միակ կիրառության դեպքն է այս ձևով, 727 (BDB 212): Արմատի հիմնական իմաստն է «հառաչել», «հոգոց հանել», «արտասանել»:

Այս համատեքստում այն վերաբերում է սաղմոսերգուի ներքին մտքերին: Հնարավոր է, որ նա՝

1. իմաստուն է, փիլիսոփա
2. Ղևտացի, երգիչ
3. քահանա, աստվածաբան

**49:4 «Ականջս թեթևու եմ առակի»** Սա արտակարգ փոխաբերություն է ուշադրությամբ առակը լսելու համար, այնպես որ հասկանաս դրա իմաստը: «Առակ» (BDB 605) տերմինը հին իմաստասիրական տերմին է, որը կարծես թե ունի հանելուկի, խրթին խոսքերի կամ առեղծվածային ճշմարտության իմաստը:

Սակայն Սաղմոս 49:4-ի երկրորդ տողը հնարավոր է լինի խոսքի մի կերպ, որը հիմա նա պատրաստվում է մի հանելուկ (BDB 295) ասել և ապա ներկայացնել դրա նշանակությունը: Սաղմոս 49:4-ի երկու մասերը կարծես թե ցույց են տալիս իմաստության երկու հիմնական ձևերը: Հեղինակն այս ճշմարտությունը հայտարարում է այնպես, որ իր մշակույթի՝ աշխարհի մարդիկ կարողանան այն հասկանալ:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 49:5-9**

<sup>5</sup>Ինչո՞ւ վախենամ չար օրերին,  
**Թե ինձ պաշարում է հետապնդողի անօրենությունը:**

<sup>6</sup>Իրենց ունեցվածքի վրա հույս դնողներից  
**Ու իրենց մեծ հարստությամբ հպարտացողներից**

<sup>7</sup>Ոչ մեկ չի կարող փրկել իր եղբորը,  
**Ոչ էլ նրա փրկագինը հատուցել Աստծուն:**

<sup>8</sup> (Քանի որ թանկ է նրանց փրկագինը, երբեք չի բավարարի),

<sup>9</sup>Որպեսզի հավիտյան ապրի ու ապականություն չտեսնի:

**49:5-9 «Ինչո՞ւ վախենամ չար օրերին»** Սա այն թեման է, որը զարգանալու է այս Սաղմոսում:

Աստվածավախ մարդիկ միշտ զարմացել են կյանքի անարդարության վրա (տես՝ Հոբ, Սաղմոս 73, Ամբակում): Հաճախ ամբարիշտը բարգավաճում է, իսկ արդարը՝ չարչարվում: Սա կարծես թե խախտում է Ղևտացիների 26 և 2 Օրինաց 27-30 գլուխների խոսքերը: ՅԱՀՎԵՆ ուզում էր կիրառել Իր ժողովրդի առատությունն ու բարգավաճումը ազգերին դեպի Իրեն գրավելու համար: Սակայն, Ծննդոց 3-ի անկման պատճառով, անգամ ուխտի մեջ գտնվող մարդկությունը չկարողացավ Օրենքը պահել: Միակ բարգավաճումը հասավ դաժան, ազահ, զորավոր մարդկանց:

Սա այն աշխարհը չէ, որն Աստված մտադիր էր ստեղծել: Իր ժողովուրդը Իր բնավորության լավ օրինակ չեն (տես՝ Եզեկ .36:22-23): Ընկած մարդկությունը չի կարող փրկել՝ փրկագնել, ինքն իրեն կամ իրենց ընտանիքներին, կամ էլ հարևաններին:

**49:5 «ինձ պաշարում է հետապնդողի անօրենությունը»** KJV թարգմանությունը տալիս է «հետապնդողի» կամ «թշնամիների» փոխարեն «կրունկներ»: Եբրայերենում բառացի այդ տերմինը (BDB 784) կարծես թե կապված է Հակոբի հետ, երբ նա բռնել էր եղբոր կրունկից իր ծնվելու ժամանակ, հետևաբար անվանվեց «խաբերա», «փոխարինող» կամ «յուրացնող»: Սա է «թշնամիներ» հասկացությունն այստեղ:

**49:6 «Իրենց ունեցվածքի վրա հույս դնողները»** Այս «վստահել», «հույս դնել» (BDB 105, KB 120) ԲԱՅԸ հիմնականում հանդիպում է Սաղմոսներում և Եսայի գրքում (տես՝ Ես .26:3-4, 30:15): Սաղմոս 37-ից հասկանում ենք, որ մենք պետք է միայն Աստծուն վստահենք: Այս համարը ճիշտ հակառակն է մարդկային վստահությանը՝ իրենց կամ իրենց նյութական ունեցվածքին (տես՝ Հոբ 31:24, Սաղմ .62:10, Առակ .11:28, 23:4-5, Մարկոս 10:23-31, 1 Տիմ .6:17-19):

## ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

### SPECIAL TOPIC: WEALTH

#### I. Հին Կտակարանի տեսակետը որպես ամբողջություն՝

##### Ա. Աստված է ամեն ինչի սեփականատերը

1. Ծննդոց 1-2
2. 1 Մնացորդաց 29:11
3. Սաղմոս 24:1, 50:12, 89:11
4. Սաղմոս 24:1, 50:12, 89:11
5. Եսայի 66:2

##### Բ. Մարդիկ հարստության տնտեսներ են Աստծո նպատակների համար

1. 2 Օրինաց 8:11-20
2. Ղևտացիների 19:9-18
3. Հոբ 31:16-33
4. Եսայի 58:6-10

##### Գ. Հարստությունը երկրպագության մի մասն է կազմում

1. երկու տեսակի տասանորդները  
ա. Թվոց 18:21-29, 2 Օր . 12:6-7, 14:22-27  
բ. 2 Օր . 14:28-29, 26:12-15
2. Առակաց 3:9

##### Դ. Հարստությունը դիտարկվում է որպես Աստծուց պարզև ուխտի հավատարմության համար՝

3. 2 Օրինաց 27-28
4. Առակաց 3:10, 8:20-21, 10:22, 15:6

##### Ե. Զգուշացում հարստության դեմ՝ ուրիշների հաշվին

1. Առակաց 21:6
2. Երեմիա 5:26-29
3. Ովսեա 12:6-8

4. Միքիա 6:9-12

Չ. Հարստությունը մեղսալից չէ իր բնույթով, եթե այն չի դառնում առաջնահերթություն

1. Սաղմոս 52:7, 62:10, 73:3-9
2. Առակաց 11:28, 23:4-5, 27:24, 28:20-22
3. Հոր 31:24-28

II. Առակացի յուրահատուկ տեսակետը՝

Ա. Հարստությունը դրված է անձնական ջանքերի ասպարեզում՝

1. ծուլությունը դատապարտվում է – Առակ. 6:6-11, 10:4-5, 26, 12:24, 27, 13:4, 15:19, 18:9, 19:15, 24, 20:4, 13, 21:25, 22:13, 24:30-34, 26:13-16
2. աշխատասիրությունը քաջալերվում է – Առակաց 12:11, 14, 13:11

Բ. Աղքատությունն ի դեմս հարստության սովորաբար լուսաբանվում է որպես արդարությունը ի դեմս ամբարշտության՝ Առակաց 10:1բ, 11:27-28, 13:7, 15:16-17, 28:6, 19-20

Գ. Իմաստությունն (Աստծուն և Նրա խոսքը ճանաչելը և այս գիտությունը ապրելը) ավելի լավ է, քան հարստությունը – Առակաց 3:13-15, 8:9-11, 18-21, 13:18

Դ. Չգուշացումներ և հորդորներ՝

1. զգուշացումներ՝

ա. զգուշ եղի՛ր բարեկամիդ համար երաշխավոր լինելուց (վստահությունը) – Առակ . 6:1-5, 11:15, 17:18, 20:16, 22:26-27, 27:13

բ. զգուշ եղի՛ր չար ճանապարհներով հարստանալուց – Առակաց 1:19, 10:2, 15, 11:1, 13:11, 16:11, 20:10, 23, 21:6, 22:16, 28:8

գ. զգուշ եղի՛ր պարտք վերցնելուց – Առակաց 22:7

դ. զգուշացի՛ր հարստության անցողիկությունից – Առակաց 23:4-5

ե. հարստությունը չի օգնելու դատաստանի օրը – Առակաց 11:4

զ. հարստությունը շատ «ընկերներ» ունի – Առակաց 14:20, 19:4

2. հորդորներ՝

ա. առատաձեռնությունը քաջալերվում է – Առակաց 11:24-26, 14:31, 17:5, 19:17, 22:9, 22-23, 23:10-11, 28:27

բ. արդարությունն ավելի լավ է, քան հարստությունը – Առակաց 16:8, 28:6, 8, 20-22

գ. աղոթք կարիքի համար, ոչ թե առատության – Առակաց 30:7-9

դ. աղաքատին տալը նշանակում է Աստծուն տալ – Առակաց 14:31

III. Նոր Կտակարանի տեսակետը

Ա. Հիսուսը

1. հարստությունը ձևավորում է հատուկ գայթակղություն վստահելու ինքներս մեզ և մեր ռեսուրսներին՝ Աստծուն և Նրա ռեսուրսներին վստահելու փոխարեն

ա. Մատթևոս 6:24, 13:22, 19:23

բ. Մարկոս 10:23-31

գ. Դուկաս 12:15-21, 33-34

դ. Հայտնություն 3:17-19

2. Աստված կհոգա մեր ֆիզիկական կարիքները

ա. Մատթևոս 6:19-34

բ. Դուկաս 12:29-32

3. ցանելը կապված է հնձելու հետ (հոգևոր, ինչպես նաև՝ ֆիզիկական)

ա. Մարկոս 4:24

բ. Դուկաս 6:36-38

գ. Մատթևոս 6:14, 18:35

4. ապաշխարությունը ազդում է հարստանալու վրա՝

ա. Դուկաս 19:2-10

բ. Դևտացիների 5:16

5. տնտեսական չարաշահումը դատապարտվում է՝  
ա. Մատթևոս 23:25  
բ. Մարկոս 12:38-40
6. վերջին ժամանակների դատաստանը կապված է հարստության մեր գործածության հետ – Մատթևոս 25:31-46

**Բ. Պողոսը**

1. գործնական կարծիքներ՝ ինչպես Առակացում (աշխատեք)  
ա. Եփեսացիների 4:28  
բ. 1 Թեսաղոնիկեցիների 4:11-12  
գ. 2 Թեսաղոնիկեցիների 3:8,11-12  
դ. 1 Տիմոթեոս 5:8
2. Հիսուսի պես հոգևոր տեսակետը (ամեն բան անցողիկ է, եղե՛ք գոհունակ, բավարարվող)  
ա. 1 Տիմոթեոս 6:6-10 (բավարարություն)  
բ. Փիլիպպեցիների 4:11-12 (բավարարություն)  
գ. Եբրայեցիների 13:5 (բավարարություն)  
դ. 1 Տիմոթեոս 6:17-19 (առատաձեռնություն և Աստծուն վստահություն, ոչ թե հարստությանը)  
ե. 1 Կորնթացիների 7:30-31 (ամեն բանի փոփոխվելը)

**IV. Հետևություններ՝**

- Ա. Չկա աստվածաշնչյան համակարգված աստվածաբանություն հարստության վերաբերյալ:
- Բ. Չկա որևէ հստակ հաստատված այս թեմայի շուրջ, հետևաբար, հասկացությունները պետք է ծաղկաքաղվեն տարբեր հաստատվածներից: Չգույշ եղե՛ք, որ ձեր կարծիքները չկարդաք այս մեկուսի, առանձին տեքստերից:
- Գ. Առակացը, որը գրվել է իմաստուն մարդկանց կողմից, ունի այլ տեսակետ, քան սուրբ-գրային մյուս ժանրերը: Առակացը գործնական է և կենտրոնացած անհատի վրա: Այն հավասարակշռում է այլ Սուրբ Գրային խոսքեր և պետք է ինքն էլ հավասարակշռվի դրանց կողմից (տես՝ Երեմ. 18:18):
- Դ. Մեր օրերը կարիք ունեն Սուրբ Գրքի լույսի ներքո վերլուծելու իր տեսակետները և մոտեցումները հարստության վերաբերյալ: Մեր առաջնահերթությունները սխալ տեղում են, եթե կապիտալիզմը կամ կոմունիզմն է մեր ուղեցույցը: Ինչու և ինչպես է մարդը հաջողություն ունենում շատ ավելի կարևոր հարցեր են, քան թե ինչքան է նա դիզում:
- Ե. Հարստության դիզումը պետք է բալանսի բերվի ճշմարիտ երկրպագության և պատասխանատու տնտեսվարության միջոցով (տես՝ 2 Կորնթացիների 8-9):

**49:7** «Ոչ մեկը չի կարող փրկել *իր* եղբորը» Եբրայերենում «եղբայր» (BDB 26) տերմինը շեշտադրության համար է կիրառվում: NEB, REB, RSV, NRSV փոխում են ռԻ («եղբայր») ԴՅ (հասաստա, BDB 36) բառի հետ: UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 245) տալիս է «եղբայր» բառին “A” գնահատական: Եբրայերենն ասում է, որ մարդը չի կարող փրկագնել (այսինքն՝ ազատել, փրկել) նույնիսկ ինքն իրեն:

**49:7,8** «փրկել . . . փրկագին . . . փրկագնել» Գոյություն ունի երկու եբրայերեն ԲԱՅ.

1. «փրկել» - BDB 804, KB 911, *Qal* ԱՆՈՐՈՇ ԲԱՅԱՐՉԱԿ և ԱՆԿԱՏԱՐ ԲԱՅ միևնույն արմատի՝ շեշտադրության համար
2. «փրկագնել» (ոչ BDB 145 I) – BDB 678, KB 733, *Qal* ԱՆԿԱՏԱՐ, BDB 497 I-ով, բառացի՝ «որևէ մարդ չի կարող Աստծուն տալ իր կյանքի գինը»:

Դրանք երկուսն էլ վերաբերում են ինչ-որ մեկին ստրկությունից կամ պատերազմի ժամանակ գերությունից հետ գնելուն:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿԱԳԻՆ, ՓՐԿԱԳՆԵԼ

**49:8-9 «Քանի որ թանկ է նրանց փրկագինը, . . . որպեսզի հավիտյան ապրի»/ «և նա պետք է դադարի հավիտյան փորձելուց»** Սա փակագծերում ներառված միտք է, որը շեշտադրում է, որ անկախ այն հանգամանքից, թե ինչքան հարուստ է մարդը, կյանքը երկարացնելու համար վճարվող գինը կամ հանդերձյալ կյանքը երաշխավորելու համար վճարվող գինը, չափազանց բարձր է: Ահա թե որտեղ է Հիսուս Քրիստոսի ավետարանը կոչվում բարի լուր (տես՝ Եսայի 53, Մարկ. 10:45, 2 Կորնթ. 5:21):

Ուշադրություն դարձրեք զուգահեռականությանը:

1. նա պետք է դադարի հավիտյան փորձելուց (BDB 761) – BDB 292, KB 292, *Qal* ՎԱՂԱ-ԿԱՏԱՐ Վալ-ով:
2. որ հավիտյան ապրի (BDB 664) – BDB 310, KB 309, *Qal* ՀԱՅՑԱԿԱՆ
3. որ չտեսնի գուրքը (BDB 1001) – BDB 906, KB 1157, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

Քրիստոնյաների համար դժվար է մեկնել նմանատիպ տեքստեր, քանի որ կարդում ենք մեր ՆԿ-յան հասկացողությամբ և բառերի սահմանումներով՝ դրանք ներմուծելով ՀԿ-յան այս տեքստերը: Սա բնագրային առումով կապ չունի Եսայի 53-ի կամ Հովհ. 3:16-ի հետ: Սա գործ ունի երկար, առողջ, բարգավաճ կյանքի հետ: Հարստությունը չի կարող երաշխավորել սա: Մեղավոր աշխարհում անգամ ուխտի հնազանդությունը չէր կարող սա երաշխավորել (այսինքն՝ Հորը, Իսահակը, Իսրայելը):

ՀԿ-ում անշուշտ կան մի քանի ակնարկներ հանդերձյալ կյանքի վերաբերյալ (տես՝ Հոր. 14:14-15, 19:25-27, Սաղմ. 16:10, Դան. 12:2), սակայն ՀԿ-ի մեծ մասը գործ ունի այս կյանքի հետ:

**49:8 «թանկ»** ՀԿ-ի համատեքստում փրկության գինը՝ փրկագինը այս էր՝

1. անարատ կենդանու մահը որպես փոխարինում՝ փոխանորդ (տես՝ Ղևտացիների 4) մարդու մեղավոր հոգու համար կամ Ղևտացիների 16՝ հավատքի համայնքի համար:
2. Սաղմոս 51-ում Դավթի գիտակցված մեղքի համար մի գոհ է նշվում (տես՝ Ղևտ. 4:2,22,27, 5:15-18, 22:14), ուստի Դավիթը մատուցեց «կոտրված ու խոնարհ սիրտ» (Սաղմ. 51:17):
3. վերջնական գինը վճարվեց «Աստծո գառան միջոցով, որը վերցրեց աշխարհի մեղքը» (տես՝ Հովհ. 1:29): Սա կանխաավել էր Եսայի 52:13-53:12 (այսինքն՝ Չարչարվող Ծառան): Այս փոխանորդական քավության հասկացությունը արձանագրվեց Հիսուսի (տես՝ Մարկ. 10:45), Պողոսի (տես՝ Գաղ. 1:4, 1 Կորնթ. 15:3, 2 Կորնթ. 5:21), Պետրոսի (տես՝ 1 Պետ. 2:21-24), և Եբրայեցիների թղթի հեղինակի (տես՝ Եբր. 7:26-27, 9:28) կողմից:

**49:9 «Որպեսզի հավիտյան ապրի ու ապականություն չտեսնի»** Ահա հարստության խնդիրը: Այն չի ապահովում վերջնական պատասխաններ: Այն չի կարող մարդուն Աստծո առջև արդարացնել կամ կյանքը երկարացնել: Հետևաբար, այն սուտ հույս է. այն փայլի պես է, որ մնում է միայն մի պահ և հետո վերանում: Միակ ճշմարիտ լույսը, միակ ճշմարիտ հույսը, և միակ ճշմարիտ կյանքը Աստծո մեջ է գտնվում:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 49:10-12**

<sup>10</sup>Քանի որ տեսնում է, թե իմաստունները մեռնում են,

Այդպես էլ հիմարն ու անխելքն են կորչում

Ու իրենց ունեցվածքն ուրիշներին են թողնում:

<sup>11</sup>Երանք կարծում են, թե իրենց տները հավիտենական են,

Ու իրենց բնակարանները մնալու են սերնդից սերունդ.

Տեղանքներն իրենց անվամբ են կոչում:

**12Բայց մարդը պատվի մեջ չի մնում .  
Անասունների նման է, որ կորչում են:**

**49:10-12 «Քանի որ տեսնում է, թե իմաստունները մեռնում են,**

**Այդպես էլ հիմարն ու անխելքն են կորչում»** Չնայած սա նման է Ժող. 2:15,16-ի մեջ օգտագործվող փոխաբերությանը, այստեղ այն այլ իմաստով է կիրառված: Այստեղ, բոլոր բաների մահը՝ ներառյալ մարդկանց և կենդանիների, կապված է հարստության միջոցով ավելի երկար կյանք գնելու անկարողության հետ: Կարծես թե կան երեք տարբեր մարդիկ և խմբեր, որոնք ներգրավված են Սաղմ. 49:10-ում իմաստուն (BDB 314) մարդը, հիմար (BDB 493) մարդը, և անզգամը (BDB 129): Քանի որ կենդանիներ են նշվում Սաղմ. 49:12 և 20-ում, ոմանք կարող են նրանց համարել այստեղ «անզգամների» (BDB 129, կենդանու պես, տես՝ Սաղմ. 73:22) շարքում:

**ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՀԻՄԱՐՆԵՐ  
SPECIAL TOPIC: FOOLISH**

Այս վերաբերմունքը՝ անձը ՀԿ-ում արտահայտվում է մի քանի տերմիններով:

1. «Հիմար», «հիմար մարդ» (BDB 17, KB 21) – տես՝ Հոր 5:2,3, Սաղմ. 107:17, Առակ. 1:7 (և այլն), Եսայի 19:11, 35:8, Երեմ. 4:22, Ովս. 9:7:
2. «Ինքնահավան» (BDB 493, KB 489) – տես՝ Սաղմ. 49:10, 92:6, 94:8, Առակ. 1:22,32 (և այլն), Ժող. 2:14-16, 5:1, 3, 4 (և այլն):
3. «Դատարկ մարդ» (BDB 614, KB 663) – տես՝ 2 Օր. 32:6,21, 2 Թագ. 3:33, 13:13, Հոր 2:10, 30:8, Սաղմ. 14:1, 39:8, 53:1, 74:18,22, Առակ. 17:7,21, 30:22, Երեմ. 17:11
4. «Հիմարություն/պնդանակատություն» (BDB 698, KB 754) – տես՝ Ծննդ. 31:28, 1 թագ. 13:13, 2 Թագ. 15:31, 24:10, 1 Մնաց. 21:8, 2 Մնաց. 16:9, Ժող. 2:19, 10:3,14, Ես. 44:25, Երեմ. 5:21

Հիսուսը երեք բառ էր օգտագործում հիմար մարդկանց բնութագրելու համար՝

1. *aphrōn* , Դուկաս 11:40, 12:20
2. *anoētos* , Դուկաս 24:25
3. *mōros* , Մատթ. 5:22, 23:17,19

Հիսուսի կողմից այս նկարագրության մասին ամենահզոր հայտարարությունը, որ մարդը օգտագործում է մեկ ուրիշին ասելով, գտնվում է Մատթ. 5:22-ում, որտեղ *mōros* արտացոլում է արամերենի *raca* բառը, որը նշանակում է կյանքի համար անկարող: Այս բաժինը գործ չունի այն հատուկ անունների հետ, որ մեկը կարող է մյուսին անվանել՝ կոչել, այլ ենթադրյալ հավատացյալի վերաբերմունքը մյուսների հանդեպ, հատկապես ուխտի մեջ գտնվող եղբայրների:

Հունարեն *mōros* տերմինը, որը թարգմանված է «հիմար», նախատեսված է եղել արտահայտելու արամերենի *raca* տերմինը: Սակայն Հիսուսի բառախաղը հունարենի *mōros* բառի շուրջ չէր, այլ հիմնականում երբայերեն *mōreh* բառի, BDB 598, որը նշանակում էր «ապատամբել Աստծո դեմ» (տես՝ Թվոց 20:10, 2 Օր. 21:18,20, տես՝ Ֆ. Ֆ. Բրյուսի *Հարցերի պատասխաններ*, էջ՝ 42): Հիսուսը փարիսեցիներին կոչեց հենց այս տերմինով Մատթ. 23:17-ում: Ոչ միայն մեր գործողությունները, այլ նաև մեր շարժառիթները, վերաբերմունքները և նպատակներն են որոշում մեզը մեր ընկերների դեմ: Սպանությունը, որքանով որ Աստված է անհանգստացած, կարող է լինել անզամ մի միտքը: Մեր եղբոր կամ քրոջ հանդեպ ատելությունը հստակ ցույց է տալիս, որ մենք չենք ճանաչում Աստծուն (տես՝ 1 Հովի. 2:9-11, 3:15, և 4:20): Սոցիալական տիրույթի լեզվով ասած, ատելությամբ լի միտքը ավելի լավ է քան մահը, բայց հիշե՛ք, որ Սուրբ Գրքի այս բաժնի նպատակն է ցրել ամեն տեսակի ինքնաարդարացում և հպարտություն մարդու սեփական բարության մեջ:



Պողոսը հետևում է ՀԿ-ին և Հիսուսին՝ հիմար մարդկանց բնութագրող մի քանի տերմիններ կիրառելիս:

1. *aphrōn*, 1 Կորնթ. 15:36, 2 Կորնթ. 11:16, 19, 12:6,11

2. *mōros*, 1 Կորնթ. 3:18, 4:10 և Հռոմ. 1:22-ում նմանօրինակ ձևեր

Մարդիկ, որոնք պնդում են, որ ճանաչում են Աստծուն, սակայն մտածում և գործում են անպատշաճ կերպերով, հաճախ են նկարագրվում որպես աղքատիկ մտայնությամբ: Պողոսի հեզնական մեկնությունները՝ հաճախ 1 և 2 Կորնթացիների թղթերում, հայտնում են նմանատիպ մարդուն: Նրանք այնքան վստահ էին, որ ունեին գիտություն, որ չէին կարողանում տեսնել և թ՛չ էլ ճանաչել ճշմարիտ՝ իրական գիտությունը:

❖ **«Ու իրենց ունեցվածքն ուրիշներին են թողնում»** Դարձյալ Ժող.2:18-23 շատ օգտակար է: Անկախ նրանից, թե ինչքան հարուստ է մարդը, երբ նա մեռնում է, այն թողնում է ուրիշներին:

**49:11 «Նրանք կարծում են, թե իրենց տները հավիտենական են»** Իմ MT երբայերեն տեքստը փոխանցում է այն գաղափարը, որ հարուստ մարդը հավատում է, որ ինքը և իր հաստությունը հավիտյան են մնալու: Սակայն LXX տարբերակը փոխում է այս միտքը «նրանց գերեզմանները իրենց տներն են հավիտյան»: Որն էլ, որ ճիշտ լինի, երկու դեպքում էլ ցույց է տալիս հարստությանը վստահելու մեծագույն հիմարությունը:

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 246) տալիս է՝

1. רבך – նրանց մեջ (NASB, «ներքին միտքը», BDB 899)

2. רבך – նրանց գերեզմանները (BDB 868): Այն գնահատում է “B” (որոշ չափով կասկածելի) #2 տարբերակը (տես՝ NJB, REB, JPSOA, LXX, Syrian, Vulgate):

«Տներ» տերմինը հավանաբար վերաբերում է զարդարված և թանկարժեք գերեզմաններին: Մրանք՝ փարավոնների պես, կարծում էին, որ իրենց ֆիզիկական արձանները երաշխավորելու են իրենց հիշատակը և ինչ-որ առումով իրենց անմահությունը:

❖ **«տեղանքներին իրենց անվամբ են կոչում»** Կերպերից մեկը, որով մարդիկ ուզում են համոզված լինել, որ իրենց հիշատակը կմնա, աշխարհագրական տեղանքներն իրենց անուններով կոչելն է (կամ օրինական գործեր իրենց անուններով): Սա նույնպես, հիմարություն է, քանի որ անունները դարեդար փոխվում են:

**49:12 «բայց մարդը պատվի մեջ չի մնում»** NEB և REB թարգմանությունները փորձելով ապահովել համագոր զուգահեռականություն Մաղմ. 49:12 և 20-ի միջև՝

1. «պատվի» (NASB, «շքեղություն»), רךב נאמרוהרל ב և BDB 430, փոխում են՝

2. «անասուններ» (NEB, REB, «վառարան»), רךב BDB 133

UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 247) տալիս է «պատվի մեջ» “B” գնահատական (որոշ չափով կասկածելի) Մաղմոս 49:12-ում և “A” գնահատական (մեծ հավանականություն) Մաղմոս 49:20-ում: Ակնհայտ է, որ հարուստների հպարտությունն ու ամբարտավանությունն է շեշտադրվում այստեղ:

#### **NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 49:13-15**

<sup>13</sup>Սա անմիտների ճանապարհն է, սակայն նրանց հետևողները

Հավանություն են տալիս նրանց խոսքերին: Սեյա:

<sup>14</sup>Նրանք ոչխարների պես գերեզման են իջնելու,

Մահը նրանցով է սնվելու.

Առավոտյան ուղղամիտները տիրելու են նրանց վրա,

Նրանց վայելչությունը կորչելու է.

Գերեզմանն է լինելու նրանց բնակարանը:

<sup>15</sup>Սակայն Աստված իմ անձն ազատագրելու է գերեզմանի իշխանությունից,

Քանի որ ընդունելու է ինձ: Սեյա:

**49:13 «Սա անմիտների ճանապարհն է»** Անմիտները վերաբերում է կա՛մ (1) այն մարդուն, որը պնդում է, որ ճանաչում է Աստծուն, սակայն ապրում է այնպես, կարծես թե Աստված չկա կամ էլ (2) չափազանց չար մարդուն: Իրականում ՀԿ-ում չկա արեխստ հասկացությունը (տես՝ Մաղմ. 53:1):

«Ճանապարհը» ՀԿ-յան դարձվածք է ապրելակերպի համար: Տես Մաղմոս 1:1-ի գրառումները:

❖ **«նրանց հետևողները հավանություն են տալիս նրանց խոսքերին»** Սա վերաբերում է այն մարդկանց, որոնց ամբարտապան հարուստները ազդում են իրենց կյանքի փիլիսոփայությամբ: Այն կարող է վերաբերել իրենց երեխաներին, իրենց ուսանողներին, այլ մարդկանց, որոնք փորձում են հարուստ լինելու, կամ նրանց ընկերներին: Սա սխալ աշխարհայացք ունենալու արդյունքն է (տես՝ Մատթ. 15:14, Ղուկ. 6:23):

❖ **«Սեյա»** Սա մի բառ է, որի մասին շատ քննարկումներ կան, սակայն քիչ միաձայնություն: Ոմանք ասում են, որ այն վերաբերում է՝

1. դադարի
2. բարձրացող կրեշենդո
3. երաժշտական ընդմիջում՝ անտրակտ
4. հավիտյան, ըստ ռաբբիների

Հենց այն փաստը, որ գոյություն ունեն շատ տարբեր մեկնություններ, նշանակում է, որ ոչ ոք իրականում չգիտի: Տես Մաղմ. 3:2-ի գրառումները և Մաղմոսների Ներածություն, VII:

**49:14 «նրանք ոչխարների պես գերեզման են իջնում»** *Շեռլ* տերմինը վերաբերում է «մեռելների տիրությանը» ՀԿ-ում: Այն դիտարկվել է որպես գիտակից մի վայր, սակայն առանց ուրախության, առանց հաղորդակցության, և մոռալ հեռանկարով խավար ու լուռ շատ օրեր:

#### ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ

❖ **«մահը լինելու է նրանց հովիվը»** Բառացիորեն՝ «մահը նրանցով է սնվելու»: Ինչ սարսափելի գուգահեռ է Մաղմ. 23:1-ի գեղեցկությանը: Մահը գրավում է նրանց այս աշխարհի հաճույքներով, սակայն վերջում թույն է (տես՝ Առակաց 1-8):

❖ **«ուղղամիտները տիրելու են նրանց վրա»** Այս ճշմարտությունը սովորեցվում է ամբողջ Աստվածաշնչով մեկ (տես՝ Դան. 7:18, Մաղ. 4:3, 1 Կորնթ. 6:2, Հայտն. 2:26):

❖ **«առավոտյան»** Սա կարող էր վերաբերել՝

1. Աստծո ճշմարտության լույսին
2. կյանքի լույսին
3. Էսկատոլոգիական առավոտյան կամ նոր օրվա սկզբի հասկացությանը

NIDOTTE, հատոր 1, էջ՝ 327, տալիս է որոշ բաների ցանկ, որոնք ներկայացվում են «լույսի» կողմից՝

1. փրկություն – Մաղմ. 27:1, Եսայի 49:6
2. բարգավաճում և խաղաղություն – Եսայի 45:7
3. ՅԱՀՎԵԻ ուխտը – Եսայի 42:6
4. արդարություն և արդարադատություն – Եսայի 51:4, 59:9
5. օրհնություն – Մաղմ. 89:15
6. Աստված Ինքը – Մաղմ. 27:1, Եսայի 60:1-3, 19-20
7. Չարչարվող Ծառան – Եսայի 42:6, 49:6
8. Մեսիան – Եսայի 9:2

Եբրայերեն բաղաձակները հնարավոր է տարբեր կերպ բաժանել, որի արդյունքում կստացվի «նրանք ուղիղ գերեզման են գնալու» (NIDOTTE, հատոր՝ 1, էջ՝ 713): Սա ավելի լավ է համապատասխանում այս պարբերության կենտրոնական ճշմարտությանը (NRSV, REB):

❖ «Կորնելու» ԲԱՅԸ (BDB 115, KB 132, *Piel* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ) բառացիորեն նշանակում է «մաշել»: Այնպես որ այս տողի միտքն է՝

1. *Շեղը* նրանց կուտի (*Շեղի* փոխաբերությունը որպես մի գազան՝ վայրի ախորժակով կամ քանանացիների մահվան աստծո՝ *Մոթի* ակնարկ. տես՝ NASB Սերտողության Աստվածաշունչ, էջ՝ 785, ծանոթագրություն և AB, էջ՝ 300):
2. Մարմինը վերածվելու է հողի, ինչպես որ բոլոր մարմինները մահից հետո (NRSV, TEV, JPSOA):

**49:15 «Սակայն Աստված իմ անձն ազատագրելու է գերեզմանի իշխանությունից, քանի որ ընդունելու է ինձ»** Ինչպիսի՜ ցնցող ճշմարտություն: Նկատե՛ք, անձնական տարրը՝ «ինձ»: Այստեղ մենք ունենք հանդերձյալ կյանքի հաստատման սկիզբը (կամ այստեղ և հիմա՝ ամբողջ կյանքի ընթացքում Աստծո հետ մտերմիկ փոխհարաբերության և վստահություն, որ այն շարունակվելու է), հիմնված ոչ թե մարդկային գործերի վրա, այլ Աստծո սիրո: Այստեղ անձնական հավատքը, ինչպես նաև հնազանդության կյանքը և վստահությունը պարզևատրվում են Աստծո հետ հավերժությամբ (տես՝ Սաղմ. 23:6-ի գրառումները):

«Ընդունել» տերմինը (BDB 542, KB 534) կիրառվում էր Ծննդ. 5:24-ում Ենովքի համար: Նա թարգմանվում է որպես ՅԱՀՎԵԻ ներկայության մեջ:

*Շեղ* բառի համար տես Սաղմ. 6:5 և 9:13 գրառումները:

**NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 49:16-20**

- <sup>16</sup>Մի՛ վախենա, երբ մեկը հարստանում է,  
Երբ նրա տան փառքը մեծանում է,  
<sup>17</sup>Քանի որ մեռնելիս իր հետ ոչինչ չի տանելու,  
Իր փառքն իր հետևից չի իջնելու,  
<sup>18</sup>Թեև իր կենդանության օրոք նա օրհնում է իր անձը  
(Մարդիկ կգովաբանեն քեզ, երբ դու քեզ լավ նայես),  
<sup>19</sup>Սակայն իր հայրերի սերնդի մոտ է գնալու,  
Նրանք էլ երբեք լույս չեն տեսնելու:  
<sup>20</sup>Մարդը, որ պատիվ ունի ու իմաստուն չէ,  
Նման է անասուններին, որոնք կորչում են:

**49:17 «Քանի որ մեռնելիս իր հետ ոչինչ չի տանելու»** Մա այն ճշմարտությունն է, որ նրանք, ովքեր վստահում են հարստությանը, մեռնելիս թողնելու են այն (տես՝ 1 Տիմ. 6:7): Հայտնություն 14:13 պատմում է մեզ, որ բարի գործերը հետևելու են այն մարդկանց, ովքեր ապրում են Աստծո համար: Գոյություն ունի կյանքի գիրք և գործերի գիրք (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ԱՍՏԾՈՒ ԵՐԿՈՒ ԳՐՔԵՐԸ): Աստված վարձատրելու է նրանց, ովքեր սիրել են և ծառայել Նրան: Դատաստանի օրը մոտենում է՝ այն մարդկանց համար, ովքեր ճանաչում են մեր Աստծուն, լինելու է վարձքի օր, սակայն այն մարդկանց համար, ովքեր իրենց են ապավինել, լինելու է հավիտենական բաժանման օր (տես՝ Մատթ. 25:31-46, Հայտն. 20:11-15):

❖ «**Նրա փառքը**» Եբրայերեն այս բառը (BDB 458 II, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՓԱՌՔ (ՀԿ)) կարող է նշանակել՝

1. առատություն
2. պատիվ
3. փառք

❖ «**իջնել**» Այս ԲԱՅԸ (BDB 432, KB 434, *Qal* ԱՆԿԱՏԱՐ) մատնանշում է հավատք, որ մեռելները հողի մեջ են կամ երկրագնդի ներսում: Տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՈՐՏԵՂ ԵՆ ՄԵՌԵԼՆԵՐԸ: Մա մի կերպ է, որով արտահայտում են մահվան թագավորություն իջնելը: ՀԿ-յան սեմական ազգի մարդիկ իրենց սիրելի մարդկանց մարմինները թաղում էին:

**49:18 «Թեև իր կենդանության օրոք նա օրհնում է իր անձը»** Այս համարը ակնհայտ կերպով կապ ունի իրենց ռեսուրսներին ապավինող մարդկանց պարծենկոտ ամբարտավանության հետ: Սակայն շողորթությունը պատրանքային է: Աստծո աշխարհը բարոյական է և յուրաքանչյուր ոք հաշիվ է տալու Աստծուն (տես՝ Դան . 12:2, Մատթ . 25:31-46, 2 Կորնթ . 5:8, Հայտն . 20:11-15):

«Իր անձի» համար (բառացի՝ *nephesh*)՝ տես Սաղմ . 3:2-ի գրառումը:

**49:19 «Սակայն իր հայրերի սերնդի մոտ է գնալու»** Սա վերաբերում է այն փաստին, որ ՀԿ-ում թաղումը հաճախ կատարվում էր ընտանեկան գերեզմանոցում՝ քարայրներում: Սա ընտանիքի հետ թաղվելու մասին ՀԿ-յան ակնարկ է:

❖ **«Էլ երբեք լույս չեն տեսնելու»** Սա հավանաբար վերաբերում է Սաղմ . 49:14-ի նույն հասկացությանը: Սա կարող է նշանակել կյանքի լույս, ճշմարտության լույս, սակայն հավանաբար այն կարող է նշանակել *Շեղի* խավարը՝ մեր Աստծուն չճանաչող մարդկանց բնակատեղին (տես՝ Հոր 3:16, 33:28, 30, Սաղմ . 36:9):

**49:20** Սա ճիշտ նույն է ինչ Սաղմ . 49:12 և համապատասխանում է Սաղմոսացի ամփոփմանը: Կործանված մարդու խղճալի, սակայն իրական նկարագրություն է, երբ նա կանգնած է իր սեփական ռեսուրսներով պարուրված (տես՝ Մատթ . 7:13-14):

## **ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ**

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ էր հրեա իմաստունը ցանկանում խոսել ամբողջ աշխարհին:
2. Ի՞նչ պատճառներ է տալիս սաղմոսերգուն հակառակության օրը չվախենալու համար:
3. Բացատրե՛ք «փրկագնել» տերմինը:
4. Ինչպե՞ս է այս Սաղմոսը կապված Ժողովողի հետ:
5. Ի՞նչ է *Շեղը*:
6. Ո՞րն է Սաղմ . 49:15-ի աստվածաբանական նշանակությունը: